Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10» ծածկագրով Վառելիքի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Վեդի

30. 01.2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ
Ս. Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն
Անդամներ
Ա. Հակոբյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի վարորդ, մեխանիկ
Հ. Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. **ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շտկման ենթակա փաստաթղթերի գնահատման վերաբերյալ**

Հիմք ընդունելով «ՆԱՐ-ԻՇԽ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա շտկման ենթակա փաստաթուղթը և առաջնորդվելով 04 մայիսի 2017թ. N526-Ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով՝ հանձնաժողովը աճուրդն ամփոփվելուց հետո որոշում էր կայացրել 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և հնարավորություն տալ «ՆԱՐ-ԻՇԽ» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունները:

Վերջինիս կողմից սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդի համակարգ ներմուծված չէ շտկման ենթակա փաստաթուղթը՝ Հավելված 1-ը, ինչպես նաև «ՆԱՐ-ԻՇԽ» ՍՊԸ-ի կողմից շտկման ենթակա էր առաջարկվող ապրանքի անվանումը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրող կազմակերպության անվանումը, ինչը նույնպես բացակայում է համակարգում:

Հանձնաժողովը որոշեց՝ «ՆԱՐ-ԻՇԽ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել հայտը՝ հիմք ընդունելով 04 մայիսի 2017թ. N526-Ն Կառավարության որոշման 42-րդ կետի պահանջները և նշված մասնակցի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի « ա » պարբերության դրույթները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. **«ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին**

(Ս. Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-25/10 ծածկագրով գնման ընթացակարգի չկայացման վերաբերյալ

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-25/10 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվել է անբավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/10» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և անգործության ժամկետի մասին

(Ս. Խաչատրյան)

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս.Խաչատրյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Հակոբյան**

_____ **Հ.Գաբրիելյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ.Բազիկյան**